

ՍԿՍՆԱԿ ԸՆԹԵՐՅՈՂԻ
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

ՍՈՂՈՄՈՆ ՏԱՐՈՆՑԻ

Ա. Դ. Ա. Վ. Ի. Ա.

78/330

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԳՈՐԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ

Արմ.

2-3013a

ՍՈՂՈՍՈՆ ՏԱՐՈՆՑԻ

Ա. Դ. Ա. Վ. Ի. Ա.

A 7240



Инд. № 9597

Հ Ս Խ Հ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1936

Պատ. խմբ.՝ Սիրաս

Տեխ. խմբ.՝ Տ. Խաչվանյան

Սրբագրիչ Հ. Դուռլոսանյան



Գլավիտի լիազոր Ա. Հ. 2109

Պատվեր 575, հրատ. 3708, տիրաժ 3.000

Պետհրատի տպարան Յերևան, 2-րդ Գնունի, 4



Հանձնված է արտադր. 7 ապրիլի 1936 թ.

Ստորագրված է տպագր. 17 մայիսի 1936 թ.

ԳԻՆԸ 53 ԿՈՊ.

СОГОМОН ТАРОНЦИ

АДАВИА

Гиз ССР Армении, Эривань, 1936 г.

Ս Ո Ղ Ո Մ Ո Ն Տ Ա Ր Ո Ն Ց Ի

Ծնվել է 1904 թվի դեկտեմբերի 27-ին Մշու շրջա-
նի, Բուլանլի գավառի Կոփ գյուղում, ուսուցչի ըն-
տանիցում: Սկզբնական ուսումն ստացել է հոր մոտ:
Իմպերիալիստական պատերազմի հետևանքով 1915
թվին ծնողների հետ միասին գաղթում է Լենինական,
ուր նա սովորում է և ավարտում Ամերիկյան կոմիտեյի
2-րդ աստիճանի դպրոցը: 1926 թվին մտել է Հայաս-
տանի սկտական համալսարան և 1930 թ. ավարտել է
նրա լեզվաբանական բաժինը:

Տարոնցին գրել է վաղ հասակից, բայց առաջին
անգամ նրա դործերը տպագրվել են 1925 թվին: 1930
թվին լույս տեսավ նրա բանաստեղծութունների ա-
ռաջին ժողովածուն «Առավոտ» վերնագրով: 1933 թ.
«Սերունդների յերգը», 1934 թվին՝ «Դարերի լեզեղը»
բանաստեղծութունների ժողովածուները:

Այժմ նա աշխատում է «Մեղրագետ»-ը խորագրով
անտիպ բանաստեղծութունների ժողովածուի վրա,
վորը շուտով լույս կտեսնի:

Տարոնցին գրում է նաև արձակ:

Տարոնցին հաջող կերպով կատարել է թարգմանու-
թյուններ Ֆիրդուսից, Գյոթեյից, Հայնեյից Լերմոն-
տովից և Ժամանակակից ռուս, վրացական և այլ սո-
ետների ստեղծագործութուններից:

ՍԻՐԵԼԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱԿՐԻՆ



Յերևանի ծայրաթաղի մի փոքրիկ սենյակում ասլրում էյինք յես ու Մարանյանը: Մարանյանը, վորին մենք կատակով «Մալր» էյինք ասում, մի տարի առաջ յեկել էր Խորհրդային Հայաստան, և վորովհետև նա յեղել էր Դեյր-Ել-Ձորի անասատները, չրջել էր ամբողջ Միջագետքը, շատ հավանական էր, վոր ունենար արկածներ: Բայց նա հակառակ իմ խնդրանքին՝ իր կյանքի արկածներից չպատմեց, ասելով, վոր չի ուզում հիշել:

Դեղին չրջանակավոր սպտուհանը, վորի դեմ Մարանյանը սիրում էր նստել, բացվում էր ուղիղ Գետարչայի վրա, և այդ ձմեռային խաղաղ յերեկոն իր դորշ, կաթնագույն մշուշով, սարգորջ յերևում էր քրտնած ապակիների միջից:

Քաղաքի վերջին տունն էր:

Յեզվ յերբ մենք հոգնած վերադառնում էյինք աշխատանքից մեր «կավե սլաքատը», ստեղծվում էր մի տեսակ խորհրդավորութուն զիչերային լռության մեջ: Մարանյանն

իր սովորական տեղն ուներ: Այդ յերեկո ար-
դեն, Գետարչայի տիրական ճայնի տակ, պա-
տուհանի մոտ նստած նայում եր դուրսը,
հանկարծ շրջվեց, վառեց ծխախոտը, ըստ իր
սովորութեան բուկը մաքրեց, և սկսեց պատ-
մել մի դեպք, վորը շատ առաջ խոստացել եր
ինձ պատմելու:

Յես նավթի լամպի պատրուկը թույլ է-
ջեցրի:

I

.. Այն քաղաքը, վորտեղ յես եյի ապ-
րում, ուղիղ քաղաքի կենտրոնում, ընկած եր
Հարիր-Ել-Մանսուրի հոյակապ ամարաթը:
Այնտեղ ապրում եր Հարիր-Ել-Մանսուրն իր
բազմաթիվ ծառայներով, ստրուկներով ու
հարձերով: Դա մի կիսախելագար և անսիրտ
ծերուկ եր, նման արևելքի ա'յն բռնակալնե-
րին, վորոնք վոչ մի միջոցի առաջ կանդ չեն
առնում իրենց նպատակներն իրազործելու
համար:

Ամբողջ մի քաղաք դողում եր այդ կիսա-
խելագարից: Յեվ յերբ նա անցնում եր փո-
ղոցով՝ ճերմակ թուշուկների պես թառած կա-
նայք, պատուհանը ծածկում եյին նրա ահից,
յերեխաները խաղը թողած, բռնված, թփրը-
տացող ծաերի նման, տուն փախչում:

Նրա անբավ հարստութեան մասին առաս-

պելներ եյին պատմում, սակայն, ինչպես ասում են, յերջանիկ մարդ չեր Հարիբ-ՆԵՄանսուրը:

Նրա փառքն ընկել եր այն որից, յերբ նա վնաս էր դրել ծերության սահմանը: Նա սպանել եր իր առաջին կնոջը, ծառայի հետ սիրաբանություն անելու համար: Յերրորդը, չորրորդը... ու բազմաթիվ հարձեր, վորոնք նրա ամարաթն եյին զարդարում, այլևս նրա մեջ վորձի բռնկումներ առաջացնել չեյին կարող: Նրա ծերուկ և անմիս ծնկների վրա, ճիշտ է, տրորվում եյին փերիների նման մատաղ աղջիկներ, բայց նրա զբզիռներն այրվող ու շուտ հանգչող եյին, ինչպես լուցիլով վառած խոտը, և այդ հանգամանքը դարձնում եր Հարիբ-ՆԵՄանսուրին ավելի մռայլ, դաժան և մարդատյաց:

Քանի քանիսին է նա թոռոմեցրել, ճմրել լիմոնի նման և չպրտել փողոց: Վորքա՞ն գրլուխներ է թռցրել նրա արծվի կացի նման կեռ թուրը: Սակայն, այս բոլորը դարձյալ չեյին հագեցնում այդ դաժան ծերուկին, և պիտի ասել, վոր նա հակառակ այս բոլորի, շատ անգամ, փողոցի աղքատին մի բան եր տալիս, կարծես, հոգու խռովքը հանգստացնելու համար:

Արևը ծագում, մայր եր մտնում, գավառներից, գյուղերից անծայր քարավաններ բե-

ըում եյին հարկը... Բայց նա այդ բոլորի վրա նայում եր մի տեսակ խորթ աչքով, և վոչինչ նրա աչքին չեր յերևում: Հաճախ դուրս եր գալիս, կանգնում պատշգամբ, վորի ներքեում, բակում, կիտում եյին բերածները, ապա ձեռքը թափահարելով մտնում եր ամառաթը, վորը զարգարված եր պարսկական ամենաընտիր դորգերով, զենքերով, փղոսկրյա ամաններով, բրոնզե, մարմարյա արձաններով, վորոնք յերկրորդվում եյին Ֆրանսիայից բերված հսկա, արծաթափայլ հայելիների մեջ:

Չգիտեմ, յերևի նկատած կլինես, վոր ծերերը վերջին որերին շատ են մտածում աշխարհային վայելքների վրա, նամանավանդ սեռական խնդիրը ամենատանջալին ե նրանց համար: Յեվ այդ անկար ծերուկը, կարմիր, պայծառ հատակի վրա քաշ տալով իր յերբուն շուքը իջնում եր ներքև, վիլլան, Ժամերով նստում արմավի ծառի տակ, հայացքը հռեւելով մի կետի, մինչև մեկը նրա սրտի պղտոր, բայց մտածողությամբ հանդիստ լծի մեջ մի քար նետեր և ալեկոծեր այն...

Դա նրա միակ աղջիկն եր, Ադավիան:

— Ադավիա՞... բացականչեցի յես.

— Այո՛, այո՛, Ադավիա՛, սիրո՛ւն Ադավիա, ծխախոտը վառելով շարունակեց Մարանյանը:

Աղաւլիայի հոր — Հաբիր-Ել-Մանսուրի քաղաքը Ֆրանսիական գաղութի մեջն եր ընկնում:

Հաբիր-Ել-Մանսուրը դարձաւ Ֆրանսիական ազենտ: Իհարկե, բոլորն այդ լավ գիտեցին, բայց լուում էյին շատ հայտնի պատճառով: Այդ հանգամանքը չեր իմանում միայն միամիտ և գեղեցիկ Աղաւլիան, վորի անունը լսելիս, զգացի, թե ինչպես վառվեց հետաքրքրությունդ:

Սոսքը անմիջապես վերաբերում է աղջկան, Աղաւլիային, այն չափով վորչափով, վոր այդ աղջիկը պիտի դառնա իմ պատմածի առանցքը:

Շատ գեղեցիկ եր Աղաւլիան, ինչպես առհասարակ գեղեցիկ են լինում արևելքի աղջիկները, մասնավորապես արաբ աղջիկները: Նրա թուխ և խոշոր աչքերը, վորտեղ խտանում էյին արաբական անապատի գիշերային անձայրածիրությունը և ցերեկվա այրող բալզամը, շատ շատերին խելահան էյին անում... Անքուն շների նման շատերն էյին թափառում Հաբիր-Ել-Մանսուրի ապարանքի շուրջը: Բայց նա վոչ վոքի չե՛ր սիրում: Չեր սիրում Աղաւլիան վո՛չ վոքի:

Գեղեցիկ իրիկունը իջել եր քաղաքի վրա:

Լուսինը կախվել եր յերկնքից նման գեղին սինու:

Ներքևի պատուհաններից կանաչ բաղեղները վոլործուն բարձրացել էյին մինչև պատշգամբը, վորտեղ նստել էր Աղավիհան: Վիլլալում մի տեսակ դիչերային խոհույլ ծանր կեցել էյին նոճին ու արմավը: Շատրվանները խփում էյին դեպի վեր, արծաթե ծառի նման խոյացած և փշրտելույ թափվում գուռերի մեջ:

Ամարաթն աղմկում էր...

Հարիր-Ել-Մանսուրը Փրանսիական սպաների հետ վայելում էր արևելյան ամենափարթամ խնճույքներից մեկը: Այդ սպաները, ինչպես դիտես, առանց հարբելու յեւ լիրբ են և ցինիկ: Յեւ այդ աղջիկը զարմանալիորեն ատում էր այդ ցինիկներին, առանց դիտակցելու, թերևս ներքին բնազդամբ, բայց ատում էր:

Ամենափարթամ արևելյան սեղանի շուրջն ինքնազոհ և լրբենի ժպիտներով խմում էյին սպաները մեծն Փրանսիայի փառքի և արար ժողովրդի «առաջնորդ» Հարիր-Ել-Մանսուրի կենացը... Արար ժողովրդի յեմ ասում, վորովհետև ինչքան չլինի, նրանք զաղութում պիտի հենարան ունենային... Բախական չես սեփական ուումբն ու թնդանոթը...

Քիչ հետո Հարիր-Ել-Մանսուրի հրամանով ընդարձակ դահլիճ մտան մի խումբ կանայք... Շատ հասկանալի յե... Առանց այդ

Եւ ցինիկ սպաները այնքան եյին հարբել, վոր
վորտքի վրա կանգնել չեյին կարողանում:

Սկսվեց մի արյունոտ որդիա:

—Օճի՛ր, ծծի՛ր այդ շրթունքները, քաղցը
են այդ շրթունքները...

—Թո՛ղ այդ աղջկան մի ըռպէ մո՛տս գա...

—Կեցցե՛ Ծրանսիան...

Փոխնիփոխ, սպաները նստեցնում եյին
աղջիկներին իրենց ծնկների վրա: Նրանք
բղկտում եյին շրթունքները նման այն ցինի,
վոր թարմ դիակ է գտել:

Ժամերը հոսում եյին և հարբած հայացք-
ներն ավելի քարային ծանրություն եյին ստա-
նում: Հարիբ-Ել-Մանսուրը նույնպէս հարբել
եր... Յերկու ուժեղ սպաներ նկատելով նրա
գունատ, քաթանի նման դեմքը, մտան նրա
տնութների տակ, տարան ինչ վոր սենյակ և
վերադարձան:

Խնձույքը առանց այդ հիմար ծերուկի յեւ
կարող էր շարունակվել, քանի վոր ամբողջ
ժամանակ սպաները վոչ թե նրա վրա եյին
ուշք դարձնում այլ այն կանանց, վոր նվիրել
եր նրանց ինքը Ել-Մանսուրը...

Որդիան դեռ կշարունակվեր, յեթե մեոյո
ժակը, վորին մենք հետադայում կհանդի-
պենք, հրաման չտար... Իսկ հրամանը վերա-
բերում էր առանձնանալուն... Թվով տասը
հոգի, հարբածության ամենաբարձր բառի-

ճանին հասած, ջոկեցին կանանցից և ապա օրորվելով, վայրի աղաղակներով առանձնացան: Միայն մեյսո ժակն եր, վոր այս ու այն կողմ ընկած փնտրում եր մեկի, ըստ յերևույթին—Աղավիհային...

Նաժիշաներից մեկը, վոր մինչ այդ վոչ մի ծպտուն չեր հանում և կանգնած եր պատըզամբում, Աղավիհայից քիչ հեռու, վերջինս նշանով մոտեցավ նրան— Աղավիհային:

— Զվերջացրի՞ն այդ շները, — հարցրեց Աղավիհան:

— Վո՛չ, տիրուհի, յերկուսը դեռ նստած խմում են... կարծես հայհոյում են...: Իսկ մյուսնե՛րը...

— Գնացի՞ն...

— Վո՛չ:

— Հասա՞:

— Մտան սենյակները... կանանց հետ... Իսկ պարոնը... են պարոնը... սենյակներն եման դալիս և քե՛զ ե վորոնում...

Աղավիհան զայրույթով վոտքի թռավ, առամները կրճտացնելով:

Նա անզոր եր, վոչինչ ել անել չկարողացավ: Ամբողջ գիշերը, մի փոքրիկ սենյակում նաժիշտ Հյուվարայի հետ լաց եր լինում հանդցնելու այն կրակը, վոր այնպես այրում եր իրեն: Նա մտքում անիծում, խարանում եր հորը, լցվում կատաղի ատելությամբ,

բայց յերբ մտածում եր յեւթի մասին՝ մնում
եր ճիշտ այնպես, ինչպես այն թռչունը, վոր
կարծում ե, թե աշխարհը շինված ե իր բնի
վրա և բացի իր բնից ուրիշ աշխարհ գոյու-
թյուն չունի...

II

Առավոտը բացվեց:

Պղտոր, արյունոտ աչքերով ու բութ դեմ-
քերով սպաները գնացին վերջապես: Միայն
մեսյո ժակն եր, վոր քնել եր մարմարե սան-
դուղքի վրա, ասես թե զսպանակավոր մահ-
ճակալ լիներ: Տղամարդ ծառաներից մեկը
չտապ-չտապ բարձրանում եր և հանկարծ,
աննկատելիորեն տրորեց մեսյո ժակին և սար-
սափից քարացավ: Նա վոչ միայն Փրանսիա-
կան սպայի հագուստից եր վախենում, այլև
նրա կրունկի հանած փոշուց:

Մեսյո ժակը, ուռած, արյունոտ աչքերը
բաց արեց, ծիծաղեց այնպես, վոր ուտերը
ցնցվեցին, ապա վեր կացավ և թույլ-թույլ
ծնկներով մոտեցավ արար տղամարդուն, վոր
աչքերը լայն-լայն բաց արած նրան եր նայում
անթարթ, ապակյա աչքերով...

— Դո՛ւ, սրիկա՛ մարդուկ, չտեսա՞ր
հա՞... ու այնպես ապտակեց, վոր արարը շա-
ռաչյունով յետ-յետ գնաց և ծեփվեց պատին:

Արարն մնաց մի վայրկյան քարացած, բայց ուշքի գալով՝ առաջ յեկավ և իր փոքրիկ մարմնով՝ ասեղի նման շուլալվեց մեսյո Ժակին:

— Յես կխեղդե՛մ քեզ... կխեղդե՛մ... մոնչում եր մեսյո Ժակը հաստ, մտոտ մատները խրելով արարի առանց այն ել մաշված վզին: Բարձրացավ տարրոխնակ մի խոխոոց, արարը վայր ընկավ կիսաուշաթափ, մի քանի անգամ թփրտաց, և լռեց...

Մի քանի ուրիշ ծառաներ այս խոխոոցին վրա հասան և թեևերը պրկելով վոստնեցին դեպի մեսյո Ժակը: Վերջինս վոչ մի հնարավորութիւն չգտնելով աղայտվելու՝ սանդուխներով բարձրանում եր և աղաղակում... Հարիւր-Յը-Մանսուրը վրա հասավ և ծառաները կորակոր յետ-յետ գնացին:

— Ի՞նչ է պատահել...

Մեսյո Ժակը գունաթափ եր: Վախկոտ այդ սպան, վոր միայն կանանց մոտ պարծենալ գիտեր, հազիվ հասկացրեց, վոր իրան ուզում են սպանել... Հարիւր-Յը-Մանսուրը կատաղեց, ներքև իջավ և տեսնելով արար ծառայի դիակը, վոտով շուռ տվեց կռնակի վրա: Հասկանալով թե բանն ինչումն է, կարդաղրեց վերցնել դիակը, ապա մոտենալով մեսյո Ժակին՝ ներողութիւն խնդրեց նրան անհանգստացնելու համար...

Նույն այդ պահին դանդաղ, ավելի վերից,
իջնում էր Ադավիան: Մեսյո ժակն զգաստա-
ցավ և զինվորականի կեցվածքով՝ բարևեց:

— Իմ միակ աղջիկն ե, մեսյո ժակ, իմ
միակ աղջիկը: Ադավիա՛, մոտեցի՛ր:

Ադավիան ատելության ժպիտն յերեսին
իջավ ներքև, թողնելով հորը և մեսյո ժակին
անհարմար դրության մեջ:

Մեսյո ժակի գնալուց հետո, վիլլայում,
նյարդային շարժումներ անելով ման էր գա-
լիս Հարիր-Նը-Մանսուրը: Հոգնելով՝ մոտե-
ցավ փայտե կանաչ նստարանին, նստեց, և ա-
պա աչքերն անթարթ հռոեց ինչ վոր կետի...
Ադավիան աննկատելի մոտեցավ և ձեռքը կա-
մացուկ դրեց հոր ուսին...: Հայրը, իրան
պաշարող մտքերից սթափվեց, թևերը յեր-
կարացրեց, ուզեց գրկել աղջկան:

— Վո՛չ հայրի՛կ, յես այլևս թույլ չեմ
տա... ինձ համբուրես...: Դու ինձ չե՛ս սիր-
ում...

— Ադա՛վիա...

— Այո՛, այո՛, դու ինձ չե՛ս սիրում...

— Ադավի՛ա, խեղդված զոչեց հայրը:

— Այո՛, դու ինձ չես սիրում: Այն ի՞նչ ե
հասպա... Մի թողնիր, վոր նրանք... այդ
չները մեր տուն դան...

— Սպանե՞րը... Ժա՞կը... բայց դու չե՛ս
հասկանում, սիրելիս, չե՛ս հասկանում...

— Յես շատ լա՛վ եմ հասկանում, և նրանք չսյխտի՛ դան...

— Աղջի՛կ, գոռաց հայրը:

Աղավիհան թևերը պոկեց հոր չորացած ձեռքերից և վաղեց դեպի սենյակ:

— Աղա՛վիա, Աղա՛վիա, նրա հետևից ձեռքերը պարզած կանչում եր հայրը: Նա թուլացած ընկավ նստարանին: Նրան թվաց թե մեկը անտես ձեռքերով սեղմում ե իր կողորդը: Հարիւր-Յլ-Մանսուրին պատեցին խոլ ու սարսափելի պատկերներ... Նա հիշեց, թե ինչպես Փրանսիացիները հուր ու սուր տարածելով մտան իրենց յերկիրը... ինչպես ինքը գնաց ծեր մայրի մոտ, յերդվեց պաշտպանել Փրանսիական դրոշակը, և վերջապես ինչքան անմեղ մարդկանց խեղդամահ անել տվեց տաք ավազուտների մեջ... Ու շատ ու շատ նման քստմենելի դեպքեր:

Հարիւր-Յլ-Մանսուրը ճչաց այդ մտքերն իրենից վանելու համար:

Որ-որի վրա քայքայվում եր Հարիւր-Յլ-Մանսուրի առողջությունը, քունը փախել եր նրա աչքերից: Այդ անխուսափելի յեր մի քանի պատճառներով, նախ, վոր ծեր եր, յերկրորդ, վոր մայրը նրան սկզբում այնքան ել չեր վստահանում, վորովհետև գավառներում ապստամբական շարժումները որ-ավուր աճում եյին, և վերջապես, նրան այլևս տաք,

վաղաքշահան խոսքեր չեր ասում միակ աղ-
ջիկը, Աղավիհան: Կարծես թե հայրն ու աղ-
ջիկը մի տեսակ թշնամիներ էյին, այդ թշնա-
մանքը քանի գնում այնքան մեծանում էր:

Այդ հանգամանքը խորին կերպով զգում
էր Աղավիհան, խղճում էր ծեր հորը: Բայց
ի՞նչ կարող էր անել...:

— Դու, սիրելի բարեկամ, դարձավ ինձ
Մարանյանը— արդեն պիտի լսես թերևս չատ
անհավատալի մի բան, վոր կազմում է պատ-
մածիս ողակներից մեկը, կարևորագույն ո-
ղակը, յեթե կուզես:

Այդ գեղեցիկ աղջիկը— Աղավիհան, յես
արդեն ասացի, վոր վոչ վոքի չեր սիրում:
Բայց կա՞ աշխարհում անսեր մարդ: Վո՛չ:
Յեվ զարմանալի չթվա քեզ, վոր այդ հոյա-
կապ ամարաթում ծնված, այդ հայտնի բըո-
նակալ արարի աղջիկը՝ սիրում էր դարբին
Սայիդին: Նա ամեն ոք տեսնում էր, յերբ վեր-
ջինս ամարաթի պատերի տակով գնում էր
դարբնոցն իր սովորական աշխատանքը կա-
տարելու:

Սայիդը թիկնեղ, բարձրահասակ և գեղե-
ցիկ մի յերիտասարդ էր, վոր յերբեք չեր հե-
ռանում Աղավիհայի մտքից: Յերագուն աղջիկ
էր Աղավիհան, մտածկոտ: Նա իր մտքում ա-
սում էր. «Աղավիհա՛, դու սիրում ես Սայիդին
նա մի հասարակ դարբին է, իսկ դո՞ւ... ո՞վ



ես դո՛ւ, քաղաքների և գյուղերի տեր հարուստ Հարիր-Ել-Մանսուրի աղջիկը... իսկ նա՞... ո՞վ է նա, մի հասարակ դարբին... մրի ու կեղտի մեջ կորած բանվոր... բայց նա գեղեցիկ է, նա խելոք է... աղքատ է... թո՛ղ լինի, յես սիրում եմ, յես նրան սիրում եմ»... :

Աղավիհային բնականորեն, վորպես հակադրություն, պատկերացավ այն դեղնած, յերկարահասակ յերիտասարդը, վոր իր ձեռքն եր խնդրում, և վորին նա այնքան չոր մերժեց: Յեվ վերջապես, այնքան յերիտասարդներ, վորոնք որ ու գիշեր ման են գալիս իր շուրջը:

Յեվ բոլորի մեջ բարձրանում է Սայիդի ցորնամորթ, առնական դեմքը ինչպես բարձր, անհաս սարը գաճաճ լեռների և բլուրների մեջ:

— Յես նրան սիրո՛ւմ եմ, սիրո՛ւմ, սիրում: Նա գլուխը թաղեց բարձերի մեջ և ուրախությունից հեծկլտաց:

Հարիր-Ել-Մանսուրը վո՛չ միայն իր, այլ և աղջկա մեջ տեսնում եր ինչ վոր փոփոխություն, բայց նրա մտքով յերբեք չեր անցնի թե աղջիկը սիրում է ինչ վոր դարբնի, վոր վոչ միայն չեր կարող ամարաթը բարձրանալ, այլև նրա դոյությունն անգամ չեր ընդունի Ել-Մանսուրը, յեթե միայն իմանար:

Պայծառ գիշերներից մեկն եր: Քաղաքում

տիրում եր անսովոր յեռ ու զեռ: Ինչպես մի
անգամ ասել եմ, Արարիայում, աշխատանք-
ները կատարվում են սովորաբար գիշերները,
յերբ զով ե լինում:

Որը տոնական եր: Վոչ վոր աշխատանք
չեր կատարում բացի Փրանսիացիներից: Ա-
դամիան նաժիշտ Հյուվարայի ուղեկցությամբ
իջավ ամարաթից և դիմեց այնտեղ ուր
բաղմությունն եր յեռում:

— Հյուվարա, սիրելիս, տեսն՞ում ես այն
յերիտասարդին, վոր խոսում ե ծեր ուղտա-
պանի հետ:

— Տեսնում եմ, տիրո՛ւհի:

— Ինչքա՛ն գեղեցիկ ե:

— Գեղեցիկ ե, տիրուհի՛... .

— Գնա՛նք նրանց կողմը... .

Յեվ ճեղքելով բաղմությունը յերկուսով
մոտեցան ծեր ուղտապանին: Ծեր ուղտապա-
նը, թեև կամաց, բայց աշխուժ տոնով զրու-
ցում եր Սայիդի հետ: Մոտեցող կանանց տես-
նելով՝ ծերը ձայնը կտրեց: Ադամիան մոտե-
ցավ փորոճացող ուղտի պարանոցին և կանգ-
նեց: Նա աչքերը շեշտակի ուղղել եր Սայի-
դին: Սայիդը նայում եր նրան: Աղջիկը ժլտ-
տաց:

— Սա քո հայրն ե՞... . այո՞, ասաց Ադա-
միան վերջապես:

— Վոչ, հարգելի՛ս, հին ծանոթս ե, հայր
չունիմ:

— Իսկ վո՞րտեղից ես յեկել...

— Յե՞ս... յես... այստեղ եմ ապրում...
դարբին եմ...

Աղավիհան շռազունած նայում էր Սայր-
դին, վոր հագել էր տոնական շորեր: Նա այն-
քան դեղեցիկ էր արարական արայի մեջ, վոր
Աղավիհային թվաց թե այն չե, ինչ վոր հա-
ճախ տեսնում էր ամարաթի պատի տակով
անցնելիս:

Նրանք հեռացան.

Ծեր ուղտապանը անհանդիստ շարժումներ
էր անում, զարմանքով նայում հեռացող տա-
րորինակ կանանց հետևից:

— Ո՞վքեր եյին, Սայրի՞դ:

— Անծանոթ կանայք... բայց թվում էր
թե...

— Ի՞նչը, մեր խոսակցությունն իմացա՞ն
իմ մասին եյին խոսում... թե՞...

— Վո՛չ, վո՛չ... բայց ինչո՞ւ հարցրին,
ովքե՞ր եյին...

— Ալլահ, ալլահ, — դուրսը թափահարե-
լով և միրուքը սղալելով մրմնջում էր ծեր
ուղտապանն արդեն անհետացած Սայրիդի յե-
տևից:

Աղավիհան հեռանալիս մի քանի անգամ
յետ նայեց, բայց չբացավ բազմության մեջ:

Հետո յերբ դուրս եր գալիս բազմության մի-
ջից դիմեց ամարաթը և ալեկոծված Սալիդը
տեսավ թե ինչպես յերկու կանայք կորան յեր-
կաթե, ծանր դարբասի յետև...

III

Արևի շողերը խաղում եյին պատուհանի
ապակիների մեջ յերանդներ արտացոլելով:
Ծառերը լողում եյին լույսերի հորձանքում:
Ամարաթի կտուրը կարծես հրդեհվել եր:

Քիչ հեռու, քաղաքի ամենաբարձր շենքե-
րից մեկի դագաթին յերևում եր Փրանսիական
դրոշակը: Քաղաքն ապրում և արևելյան մի
ծուլլ թմբություն:

Նստել և Ադամիան ամարաթի պատշգամ-
բում, աչքերը հառած դեպի ներքև հողսերով
ծանրացած ամբոխին, վորը և՛ շտապում և,
և՛ չի շտապում: Ահա անցնում և Փրանսիական
մի վաշտ իրենց դռների սողնով: Բոլորն ու-
րախ են, հաղթական, գոհ:

Դիմացի խաչածևոդ փողոցի մի տան ան-
կյունից յերևաց մի մարդ, վոր լայնշտապ
քայլերով առաջ յեկավ ու խառնվեց տուն
դարձող մի խումբ աշխատավորների:

Նա մտանում եր ամարաթին:

Ադամիան ճանաչեց նրան:

— Սալի'դ, շնջաց աղջիկը. — Սալի'դ...

Սալիդը նայեց շուրջը, վոչ վոք չէ
կար: Ո՛վ է:

— Սալի՛դ, ասաց յերկրորդ անգամ Ադա-
վիան... ու ձեռքում յեղած վարդը նետեց
նրա վոտքերի առջև: Տղան մի անգամ ել նա-
յեց շուրջը, ապա խմբից մի քիչ յեա մնալով
նայեց վերը՝ պատշգամբին: Աղջիկն այնքան
բարձր էր, վոր ձայնը հաղիվ էր լսվում:

— Սալիդ, չե՞ս ճանաչում, յե՛կ այստեղ,
վոչ վոք չկա:

Տղան մի քայլ յետ-յետ գնաց, հեռացավ
պատշգամբից այնտեղ յեղածին տեսնելու:

— Յես քեզ սիրում եմ, հասկանում ե՞ս,
Սալի՛դ:

Սալիդը հիշեց անցյալ որվա դեպքը. յեր-
կու համարձակ կանայք. ծեր ուղտապանը,
նրանց կորչելը... Յեվ կգնար այնտեղ, յեթե
այդ ըոպէյին պատշգամբի մյուս ծայրին չե-
րևար Հարիբ-Ել-Մանսուրը, վոր մեծ ուշա-
դրությամբ լսում էր աղջկան:

— Ո՞ւմ հետ ես խոսում, աղջի՛կս:

— Յես... յես... վոչ վոքի,— շփոթվեց
աղջիկը:

— Տուն գնա՛... տուն, ասաց հայրը և աչ-
քերը մեխեց ներքև Սալիդին, վոր յետ-յետ
նայելով հեռանում էր:

Հաջորդ առավոտը, նույն ճամբով, Սա-
լիդը չիմացավ թե ինչպես հասավ դարբնոց:

Նրա բերբերի մեջ, կաս կարմիր քուրայում,
ուրվագծվում էր Ադավիան:

«Ի՞նչ պիտի անեմ, ի՞նչ... ասում էր մըտ-
քում դարբին Սայիդը: Յեթե Ել-Մանսուրն
իմանա, յեթե վոչ ինձ համար, զոնե նրա հա-
մար վատ կլինի: Իհարկե, դադանիք մնալ չի
կարող»... Յեվ նրա սրտում ուրախության
հետ մեկտեղ՝ սողաց վախի նման մի զգա-
ցում...

Որեր անցան:

Ընկերները Սայիդի մեջ մեծ փոփոխու-
թյուններ ելին տեսնում: Այդ խելոք յերիտա-
սարդը, վոր յերեխա ընկերոջն անգամ կլսեր,
դարձել էր ավելի անտարբեր և մի տեսակ
մտացրիվ: Ճիշտ է, նա աշխատում էր առույգ,
ու նրան թվում էր, թե ինքը այս աշխարհի
յերջանիկներից մեկն է, բայց և լուրջ մտա-
ծում էր այն հետևանքների մասին, վոր կա-
րելի յեր սպասել Հարիր-Ել-Մանսուրից...
Մտածում էր նա դարբնոցում աշխատանքի ու
հանդատի ժամերին:

— Սայիդ, ճիշտ է, վոր Ֆրանսիացիները
Մարոկկոյի ապստամբությունը խեղդել են:

— Այո, ճիշտ է, հառաչեց Սայիդը,
բայց...

— Ել ինչ... մոտեցավ նրան ընկերը,
չե՞ վոր ինք... ուսում ես...:

Կարծիքի, փոքրիկ քթով տղան մուրճը գետին նետելով՝ ավելի հպվեց Սայիդին:

— Ի՞նչ ես կարծում, մեր մոտից յե՞րբ են գնալու:

— Հա՛, հա՛, հա՛... ծիծաղեց Սայիդը, — մեր մոտի՞ց... Հա՛, հա՛, հա՛: Լսիր բարեկամ, իրանց վոր մնա մինչև աշխարհի վերջն ել կմնան: Նրանք յերկար չեն մնալու այստեղ, հասկացա՞ր... Մի որ դուրս կքչենք այդ սրիկաներին:

Նա այնպես թափ տվեց ընկերոջ ուսը, վոր քիչ մնաց վերջինը վայր ընկներ: Հանդատի ժամին տեղի ունեցող այդ խոսակցությունն ընդհատեց կառքի դղրդյունը, վոր կանգնեց դարբնոցի դռան: Գործավորները նե՛րս թափվեցին, և տեղի ունեցավ սովորական աշխատանքը: Մինչ նրանք ներս եյին մտել, դարբնոցում կանգնած եյին ինքը Աղավիան և նա՝ Ժիշա Հյուվարան:

Սայիդի սիրտն արագ-արագ զարկում էր: Մի՞թե սա Աղավիան է: Նրան թվաց թե ինչ վոր յերազ է, ուղեղի մի խե՛ղճ գառանցանք: Ամարաթից—դարբնո՞ց...

Ծեր վարպետը մոտեցավ ո գլուխ տը-
վեց.

- Շինել տուր ինձ հաս ացին.
- Լավ-լավ.
- Իսկ յե՞րբ կարող ե լ...

— Յերկու որից :

Այս վերջին խոսքերը Աղավիհան բոլորովին չյսեց. . . Նա առաջ անցավ ինքնաբերաբար ձեռքը տարավ դեպի մուրճի կոթը և ապա կոթի վրայից սահեցնելով բռնեց Սայիդի ձեռքը, այնքան մոտ, վոր կարծես ուզում էր դարբնի շունչը խմել . . . :

— Սայի՛դ, Սայի՛դ . . .

Ապա նա ձեռքը յետ քաշեց և առանց Հյուսիսային ձայն տալու դուրս յեկավ դարբնոցից : Նաժիշտը հետևեց նրան : Իարբնոցի աշխատակիցները նայում էին Սայիդին, գլուխները շարժում և բան չեյին հասկանում . . .

Չարմանալի յե չե՞ . . . Ամարաթից—դարբնոց, արար իշխանավոր աղջկա այսպիսի համարձակութուն . . . բայց այդպի՛ս էր :

Իարբնոցը, վորը պատկանում էր Ֆրանսիացիներին, ուներ տասից լավելի յերիտասարդ աշխատակիցներ, բոլորն էլ արարներ : Ծերուկ դարբինը, վորի առաջին ատամները դեռ յերիտասարդ ժամանակ ինչ վոր բանցքակովի պատճառով թափվել էյին, բառիս բուն նշանակությամբ ստրկահոգի մի մարդ էր : Նա չէր սիրում Սայիդին նրա ըմբոստ բնավորության համար : Ծերուկը նույնիսկ գլխի յեր ընկել, վոր Սայիդը յերիտասարդներին նոր մտքերով հիմարացնում է : Աղավիհայի

գալուց հետո ծեր դարբինն ավելի սկսեց հետապնդել Սայիդին...

Իհարկե, այդ սիրուն աղջկա հաճույքը կացին շինել տալը, մի պատրվակ էր Սայիդին ավելի մոտիկից տեսնելու. և ուրիշ մոռցինք: Նա յերկրորդ անգամ դարբնոց չեկավ և կացին չուզեց: Չարմանալի յեն կանայք:

Կացնի մասին վարպետը նախորոք հայտնել էր Ֆրանսիացի վերակացույին, և ահա նա ներս է մտնում աչքի մի ծայրը Սայիդից չհեռացնելով:

— Լսի՛ր, ծերուկ, այս տղան ի՞նչպիսի տղա յե...

Խոսքը վերաբերում էր Սայիդին:

Վարպետն ուսերն ու դեմքը ծամածուեց և ինչ վոր մըթմըթաց:

— Լա՛վ, լա՛վ, շարունակեց տաքացած վերակացուն, — անցյալ որը ի՞նչ աղջիկ է յեկել այստեղ... սա ի՞նչ կացին է:

Լուռթյուն:

— Այստեղ արի, ձեռքի մտրակով կանչեց Սայիդին:

Սայիդը մուրճը չպրտեց գետին և մոտեցավ:

— Ո՞վ է յեկել քեզ մոտ անցյալ որը...

— Ինչո՞ւ համար...

— Ինչպես թե ինչո՞ւ համար:

— Շատ պարզ:

— Յեա քեզ ասում եմ՝ ո՞վ է յեկել քեզ մոտ:

— Որինակ՝ դուք:

— Չգուշացիր, ստրուկ, քո գլխի վրա յե Ֆրանսիական դրոշակը...:

Սայիդի աչքերը վառվեցին:

.

Տիրող լուսթյունը մի վայրկյան տևեց և խզվեց այն ժամանակ, յերբ վերակացույի անսպասելի ապտակն իջավ Սայիդի յերեսին... Դարբնոցում սկսվեց իրարանցում: Վրա յեր ուղում հասնել յերկրորդը, բայց Սայիդն այնքան ամուր բռնեց վերակացույի թևից, վոր վերջինիս թուլացած ձեռքից՝ ուետինն մտրակը վայր ընկավ և մնաց հատակին մեռած ոճի պես:

— Սայի՛դ... Սայի՛դ, աղաղակում եք ծեր վարպետը.

վերակացուն հիշոցներ անելով դուրս գնաց և ուղիղ դիմեց մայրի մոտ գեկուցելու:

Գեներալ մայորը վաթսուենից անց տարիքի մարդ էր և վորն առհասարակ հետաքրքրվում էր ամենաչնչին գործերով՝ հանգիստ լսում էր:

— Իսկ աղջիկն ո՞վ է յեղել:

— Չպարզվեց, ձերդ մեծություն:

— Ինչո՞վ էք հաստատում, վոր նա մտքեր

և պղտորում և կապեր ունի կասկածելի ան-
ձանց հետ:

— Դարբնոցի վարպետն ասաց: Նա այդ
բոլորը լսել է, ձերդ մեծություն: Լսել է նաև,
վոր մենք, Փրանսիացիներս, դաժանություն-
ներ ենք անում, ձերդ մեծություն, վոր մենք
խեղդել ենք Մարտիկոն, ձերդ մեծություն:
Յե՛վ բացի այդ, ձերդ մեծություն, իբր, մենք,
չուտով կթողնենք այս յերկիրը այսինքն...
տեղական ժողովրդի զենքի ստիպմամբ, ձերդ
մեծություն:

Մայրի աչքերում փայլատակեց զայրույ-
թը.

— Բա՛նա:

IV

Աղավիհան միայն մի քանի որից հետո իմա-
ցավ, վոր Սայիդը բանտարկված է: Նա այն-
քան տխրեց, վոր հոր բոլոր տեսակի փորձերը
հրան ուրախացնելու՝ զուր անցան:

— Աղավիհա՛, քեզ ի՞նչ է պատահել.

Աղջիկը յերեսը շրջեց դեպի պատը:

— Աղավիհա՛, վերջապես, նորից ասաց հայ-
րը:

Հեռավոր մի հույսի շող ծագեց նրա գլը-
խում. յեթե մեկը կա, վոր պիտի ազատի բան-
տից Սայիդին՝ դա, իր հայրն է, և նա ման-

կալան միամտութեամբ լցված՝ դարձավ գեպի
հայրը:

— Դու ինձ սիրո՞ւմ ես...

— Դու, իմ միակ դավա՛կ, իմ յերջանկու-
թյո՛ւն, ո՞ւմն են այս հարստությունները,
հրամայի՛ր, ինչ ուզում ես հրամայի՛ր... միայն
մի՛ տխրի:

Աղջիկը լացակումած ասեց.

— Հայրի՛կ, դու ճանաչո՞ւմ ես... Ռուսիա-
թին.

— Ռ՞՞վ ե նա.

— Նա... նա... իմ լավ ընկերուհին է: Ասա
վոր դու կկատարես... նա լա՛վ աղջիկ է...
նրա յեղբորը բանտարկել են... յեկել եր այս-
տեղ... նա լալիս եր... ազատի՛ր նրա յեղբո-
րը... Ռուսիաթը լալիս է... ազատի՛ր Սայի-
դին, հա՛յրիկ:

Հարիւր-Ել-Մանսուրի համար աշխարհում
չկար ավելի տանջալի բան, յերբ նրան մղում
են միջնորդութեան: Չկտարելով իրեն, նա թեև
արտաքուստ ուրախ, բայց ներքուստ սարսա-
փելի ատելություն զգաց գեպի իր այնքան
սիրած աղջիկը, և գնաց:

Յերբ Ել-Մանսուրը մտավ մայրի սենյա-
կը, մայրն ուրախ տրամադրութեամբ ընդու-
նեց նրան և հաղորդեց, վոր քիչ հարավ, ա-
պրտամբնների մի ցեղապետ չարաչար պար-

տությունն ե կրել Ֆրանսիական արի բանա-
կից...

— Ինչո՞վ կարող եմ ոգտակար լինել, Եւ-
Մանսո՛ւր:

— Տեր, ասով Եւ-Մանսուրը.— մի քանի
որ առաջ ձեր դարբնացի վերակացուն բանտար-
կել ե քո ստրուկներից մեկին:

Մայնորը հիշողությունը լարեց:

— Կարծես մեկը յեղել ե, և կասկածելի
մարդ ե այդ բանտարկվածը:

Մայորը բլոկնոտը նայեց: Այնտեղ խոշոր
տառերով գրված եր՝ «Մայիդ Աբու Ալաքբար,
կասկածելի...»:

Հարիր-Եւ-Մանսուրը կարծես շանթահար
վեց մայորի յերկար նայելուց: Նրան թվաց,
թե ինքն իր հավատարմության բարձունքից
ընկավ:

— Աղատի՛ր նրան, ասաց խեղդված ձայ-
նով Եւ-Մանսուրը, յես յերաշխամորում եմ իմ
դիտով... Յես կհսկեմ նրան, և յեթե նկատվեն
ծուռ քայլեր՝ նա իմ ձեռքով կկորչի...

— Դո՛ւ, Եւ-Մանսուր, քո հավատարմու-
թյամբ... ուզում եր շարունակել մայորը...
յերբ հեռախոսը խռպոտ հաղաց: Մայորը վերց-
րեց փողը:

— Ի՞նչ... քանի հազա՞ր... դեպի քաղաքն
են գալի՞ս, մերոնք շատ նե՞ղ են: Իսկ յեթե...
այո՛, այո՛, չխնայեք վոչ վոքի... Ուղարկում

եմ նաև Հարիր-Ել-Մանսուրը գլխավոր շտաբում աշխատելու:

Գողգոթ ձեռքերով մայրը զանգահարեց և մի սպա ներս ընկավ:

— Ասացեք մայր Ժակին՝ ազատել անցյալ սրբ բանտարկած դարբին տղային:

Նույն ուրը, յերբ Հարիր-Ել-Մանսուրը մեկնում էր Ֆրանսական զինվորական շտաբում աշխատելու, բանտից ազատված Սայիդը տարտամ քայլերով դիմեց ծանոթ սրճարանը: Ծխի սպիտակ մի ամպ էր դոյացել այնտեղ և մարդիկ նարդիլե եյին ծխում նյարդային դեմքերով և լուին խոսակցում:

Սայիդը սրճարանում տեսավ մի քանի մտախի ընկերներ, նրանց ինչ վոր փափսաց և քաշ սվեց իր հետևից:

— Տես՞ք այն սևամիրուք շեյթանին, վոր այնպես նայում էր: Ել-Մանսուրի լրտեսներից է: Նրանք կամացուկ, շնջալով առաջ անցան: Փողոցում, մի զինվոր կամացուկ սակարկում էր ինչ վոր կնոջ հետ: Քիչ հետո նրանք անհայտացան: Հնամաշ սեղանի շուրջը Սայիդի տանը խմբվելով սկսեցին տաք տաք խոսել...

— Յես ազատվեցի... այո՛, ազատվեցի, ասաց Սայիդը, այդ բավական չե, բարեկամներ, վաղը քեզ, մյուս ուրը սրան, կբանտարկեն, կսպանեն: Ֆրանսիացի պարոնները մեք

յերկիրը թալանելուց զատ՝ պոռնկացնում են
 մեր քույրերին և կանանց: Տեսա՞ք, չե՞, դուք
 տեսաք այն աղջկան... Յես նրան ճանաչում
 էի. նա ամուսին ուներ, յերբ Փրանսիացիք
 յեկան նրա ամուսնուն հրացանազա՛րկ արին,
 նրա համար, վոր ծիծաղել էր մի զինվորի
 քանդված կոչկի վրա... Յեվ կրանտարկե՛ն,
 կսպանե՛ն, կառնանդե՛ն, քանի մենք այսպես
 ստրուկ ենք, քանի մեր յերակներում չի վառ-
 վել վրեժի արյունը:

Իմ ծանոթ ծեր ուղտապանը, վորին մի քա-
 նի շարաթ առաջ տեսա, յեկել էր Պարսկաս-
 տանից: Ինչե՛ր էր նա ստում. ինչե՛ր էր նա
 պատմում Լենինի յերկրի մասին, վոր լսել էր
 Պարսկաստանում: Վերջապես, ընկերնե՛ր, յես
 ճանաչում եմ Փրանսիացի մի յերխաասարդ զին-
 վորի, վոր ինձ ասում էր թե՛ մենք իզո՛ւր ենք
 իրար ջարդում, մենք պիտի դուրս գանք մեզ
 այստեղ բերողների դեմ: Ինչպե՞ս է նա այս-
 տեղ ընկել, չեմ հասկանում... Դրա համար
 քավթառ մայորը նրա վրա կասկածանքով է
 նայում: Նա ինձ ծանոթացրեց Լենինի հետ:
 Դուք գիտեք Լենինին, չե՞, ընկերներ:

Ի ոյորը գլուխները շարժեցին դրահան:

— Իսկ դու գիտե՞ս, վոր շուտով մտնելու
 յեն քաղաք.

— Ովքե՞ր... Իբր չգիտենալով հարցրեց
 Սայիդը.

— Իհարկե, մերոնք, ասաց մի ճերմակ չալ-
մայաւոր, վորի քունքի յերակները տրոփում
եյին:

— Բայց և դիտե՞ք, վոր նրանք քաղաք չեն
մտնելու, քանի վոր նրանց դեմ ուղարկեցին իր
հազարավոր ձիավորներով Հաբիր-Յէլ-Մանսու-
րին, վոր Փրանսիացիներին ոգնի իր «յերկրի
ազատութեան համար»:

Մի քանի ձեռքեր բռունցքվեցին:

— Մենք պիտի գնանք ապստամբութեան
վայրը:

— Այո՛, պիտի գնա՛նք, ասաց Սայիդը
վճռականորեն:

V

... Բայց, դժբախտաբար, շարունակեց
Մարանյանը հառաչանքով, — մինչ նրանք տա-
նից դուրս կգային քաղաքն արդեն հայտարար-
ված եր զինվորական դրություն, վորովհետև
ապստամբ արար գերիներ եյին բերում, և ա-
ռանց մեսյո ժակի կարգադրութեան՝ վո՛չ վոք
առաջ շարժվել չէր կարող:

Չորս որ քաղաքն ապրեց մի ծանր կոշմար:
Հաբիր-Յէլ-Մանսուրն իր գործը կատարել
եր Փրանսիական սպաների հետ:

Հոր այս արարքն Աղավիսային ձգել եր ան-
պուրժ տխրութեան մեջ, վորից ազատվելու
համար՝ նա յելք եր վորոնում: Վիլլայում, շեկ



և դեր նաժիշտ Հյուլարան զբաղեցնում էր նրան ինչ վոր խոսակցութեամբ: Նաժիշտը պատմում էր Աղավիհային, թե ինչպես, մի քանի տարի առաջ, մի ապստամբութիւն խեղդելու ժամանակ սպանվել էր իր ամուսինը, վորին ինքը Լեյլայի նման սիրում էր... Ապա մի աստիճանավոր զինվորական առել էր իրեն իր մոտ, ձանձրանալուց հետո շարտել էր փողոց. հետո հասարակաց տուն, և այնտեղից Ել-Մանսուրի հավանութեամբ— ամարաթ:

— Ա՛խ, այնպես տխուր է կյանքը, — հառաչեց Աղավիհան:

— Միթե՞ քեզ համար ե՛լ է տխուր, տիրուհի՛:

— Այո՛, տխուր է,՝ առանց... իմ Սայիդի...:

Աղավիհան հանկարծ վռտքի յելավ և հրամայեց Հյուլարային հեռուել իրեն: Դարբասի մոտ կանգնած պահակներն զգաստացան: Նրանք յերկուսով առաջ անցան:

— Ովքե՞ր էյին, ասաց առաջին պահակը.

— Աղավիհան էր. հնչեց յերկրորդը:

Նրանք արդեն ծրագրված նպատակով անցան մի քանի փողոց, բայց շփոթված յետ դարձան: Մտնելով իրար մի քանի խաչաձևող փողոցներ, վերջապես գտան դարբնոցը, վորտեղից փչում էր քիթը ծակող մխի թանձր և կծու բույրը:

— Դե՛, ներս մտիր և քեզ ասածներս մեկ-մեկ ասա :

Հյուվարան ներս մտավ, իհարկե, կացինն ուղեւոր պատրվակով, վորոնեց Սայիդին, դրտավ և մոտեցավ նրան: Նա շնջում եր Սայիդին. «Աղավիհան քեզ կանչում ե, այսօր, յերեկոյան, դռան պահակներին ցույց տուր յերկու մատներդ, ա՛յ այսպես...»:

Դա այնքան անսպասելի և շմեցուցիչ եր Սայիդի համար, վոր մինչ դործի ավարտումը՝ չկարողացավ այդ մեխված առեղծվածը լուծել:

Ծեր դարբինն ելի նախատում, հայհոյում եր, վոր Սայիդն ուղում ե վոչ միայն իր, այլև՝ դարբնոցի աշխատակիցների դժբաղդության պատճառը դառնալ:

Ժամերը սահում եյին դանդաղ.

Վիլլայում, իր սովորական նստարանի վրա, գլուխը թեք, յերազում եր դեղեցիկ Աղավիհան: Մի փոքրիկ, անտես թռչուն, հըրճվանքով յերզում եր անդորրության մեջ, և կարծես նրա յերզն եր—

«Կգա՛, կգա՛, կգա...»:

Հյուվարան, Աղավիհայի այդ միակ ու հավատարիմ ընկերուհին, Աղավիհայի նման բռննրված եր սպասման տենդով: Նա յերբեմն յերբեմն վազում եր պահակների մոտ և պատվերներ տալիս, և հաճախ զվարճացնում նրանց:

Պահակներին մեկը, վոր բավականին կատակասեր և շաղակրատն էր, անհամարձակ կամտեց Հյուսիսարայի այտը, ասելով՝

— Գլխիս վրա, հենց յեկավ՝ կթողնեմ... բայց դու...

— Դե, լա՛վ, հերիք ե, սատկած...

Յերբ նաժիշտը գնում էր դեպի վիլլան Ադավիայի մոտ, նույն պահին, ծուռ ու մուռ փողոցներով անցնելով Սայիդը յեկավ քաղաքի ամենամեծ փողոցը և մոտեցավ ամարաթին:

Նա, սկզբում մտածում էր յետ գնալ, բայց վերջը հաղթահարեց այդ միտքը, և ամբողջ ճանապարհին մտածում էր թե միգուցե վորոգայթ ե պատրաստում իր համար այդ աղջիկը... վո՛չ, վո՛չ, նա չի կարող այդպիսի քայլ անել, իսկ յեթե անի՞...

Այսպես մտածելով նա զգաց, վոր արդեն կանգնած ե ամարաթի դռանն, ուր պահակներն որվա տոթից թուլացած՝ հազիվ եյին կանգնում վոտքերի վրա: Սայիդը կարծես բնազդարար ձեռքը վերցրեց և յերկու մատները զուսպ զինվորների նման կանգնեցին...

Պահակներն զգաստացան:

Նաժիշտը ծառերի շարքերի տակով Սայիդին առաջնորդեց Ադավիայի մոտ:

Աղջիկը վոտքի կանգնեց և հանցապարտի պես նայեց տղային: Հանցապարտի յեմ ասում, վորովհետև նա չզխտեր, ի՞նչ ասի և ինչպես

սկսի...: Յեւ վ դարձանալի չթվա, վոր Սայի-
դը, այդ համարձակ տղան, չեր կարողանում
չուրթերը շարժել: Ճիշտ ե, նա, թերևս Ադա-
վիայից ավելի խորն եր սիրում, բայց, նրա
մեջ, վորպես հասարակ բանվորի, սիրո դեմ
կուվում եր միաժամանակ այն զգացմունքը,
վոր ինքը յեկել ե վոչ թե իր սիրած աղջկա
մոտ, այլ իր թշնամու...

— Սայի՛դ, շնչաց Ադավիան:

Լուրթյուն...

— Սայի՛դ, դու... սիրում ե՞ս ինձ...

Շատ դեպքերում լուրթյամբ և աչքերի լեզ-
վով են խոսում յերիտասարդները միմյանց
հետ... Այդպես նրանք հասկացրին իրար, և
ուրիշ կերպ ել լինել չեր կարող, վորովհետև,
ըստ յերևույթին, Սայիդը այնքան ել հավատ
չեր ընծայում այդ բռնակալի ազնիվ աղջկան:

— Իսկ դո՞ւ... կասկածի և վարանումի
չեչտով ասաց Սայիդը:

Սայիդը, միայն այն զգաց, վոր Ադավիա-
յի շտապունոված շրթունքները մոտեցան իր
շրթերին...

— Ադավիա՛, Ադավիա՛, շնչաց Սայիդը, —
դու յերբեք չես հեռանում իմ մտքից: Յեւ յե-
թե չլինեն ձեր դուռն կանգնած շները, իսկ յե-
թե... յեթե... չլինի քո հայրը... յես ամե՛ն
որ կգամ քեզ մոտ...

— Իմ հայրը՞... Ալլա՛հ, ալլա՛հ...

— Վո՛չ, մի կանչիր ալլահին... յես նրան լավ գիտեմ:

Աղավիհան յերկյուղածությամբ մի քայլ յես դնաց:

— Սայի՛դ:

— Աղավիհա, դու դեռ չգիտես... դու դեռ չգիտես, թե ինչե՛ր են անում այդ ալլահին հարգողներն ու պաշտողները... Ալլահը միշտ ողնել է նրանց, վորոնք քո հորն են պատվում, մեծարում...

— Իմ հոր՞ը... այսինքն...

— Այսինքն այն, վոր, մի գունատվի Աղավիհա, քո հորն են հարգում, վոր Փրանսիացիներին աջ թեն է և նրանց լրտե՛սը:

Աղավիհան ճչաց և վայր ընկավ... Նա աչքերը փակած թույլ շնչում եր Սայիդի գլըրկում... Յերբ աչքերը բացեց, նրան այդ բոլորը թվաց յերազի նման մի բան:

— Ասա՛, ասա՛ Սայիդ, վոր դու խարում ես. թշնամի յես իմ հորը:

— Մեր սերը վկա, Աղավիհա, յես չեմ սրտում: Յես քեզ սիրում եմ իմ կյանքից ավելի շատ: Իայց չեմ կարող մոռանալ այս չարքաշ ժողովրդի տանջանքները, վոր քո հայրն է պատճառում... դու չգիտե՛ս, վորքան դաժան են Փրանսիացի սպաները, վորոնց ողնում է քո հայրը:

Աղավիհան կանգնել եր Սայիդի առաջ և

խոսք չէր գտնում ասելու: Նա, ինչպէս հաճախ, ներքուստ խորն ատելություն զգաց դեպի հայրը, և արեւելցի կնոջ հատուկ արիությամբ բացականչեց.

— Յես կստուգեմ այդ, Սայի'դ... յես կըստուգեմ':

VI

Դարբին Սայիդն իր կյանքի ամենալավ որն այդ իրիկունը համարեց: Նրա շրթունքները, վոր մինչև այդ մուր էյին ծծել, առաջին անգամ հպվեցին կնոջ շրթերին: Ընդամենը յերեք որ եր անցել, բայց կարծես թե վառվում էյին նրանք՝ ինչպէս տոթակեզ անապատի ավազուտը:

— Սայիդ, այս մի քանի որը վոխված ես յերևում, քեզ ի՞նչ ե պատահել, ասաց Ռահիմը, վոր նրա ամենամոտ ընկերներից մեկն էր:

— Այդ ինչպէ՞ս դիտես, ժպտաց Սայիդը:

— Տեսնում եմ:

— Նկատե՛լ ես:

— Մի թաղցնի ինձանից Սայի'դ:

— Ռահիմ, լսի՛ր, դու իմ մոտ, շատ մոտ բարեկամն ես, ընկերը... բայց կան բաներ, վոր չի կարելի ասել...

— Գուցե վա՛տ ընկեր եմ յեղել... Լավ, լա՛վ, շատ լավ...

— Լա՛վ, մի նեղանա, չեյթա՛ն, կասեմ:

Դու տեսնում ե՞ս այս ամարաթը, դիտե՞ս
Հաբիր-Ել-Մանսուրին:

— Գիտեմ:

— Յես, սիրելի Ռահիմ, սիրում եմ նրա
աղջկան...

— Աղավիհայի՞ն...

— Այո՛:

Ռահիմի հոնքերը ներքև իջան, այդ լուրը
այնքան տարորինակ թվաց Ռահիմին, վոր նա
կարծեց թե Սայիդը կատակ է անում: Այո,
այո, կատակ է անում, անցավ նրա մտքով:
Աղավիհայի՞ն... այն աղջկան, վորի համար
չատերը...

— Իսկ նա՞... ուրախ վրա տվեց Ռահիմը.

— Իհարկե, նա նույնպե՛ս:

— Չեմ հասկանում, ուսերը վեր քաշելով
ասաց ընկերը:

Նրանք մտան Սայիդի տուն:

Ընկերների խոսակցությունն ընդհատեց
քաղաքի փողոցներով հաղթականորեն անցնող
Ֆրանսիական վաչտը: Սայիդը բաց արեց պա-
տուհանը, ապա այնպես ամուր խփեց պատու-
հանի փեղկերը, վոր ապակին դողաց և ջարդ-
վելով մանրիկ անձրևեց դետին:

— Ե, բարեկամ, քանի սրանք ծծում են
մեր յերկիրը, քանի սրանք կան, Սայիդի հա-
մար վո՛չ մի Աղավիհ գոյություն չունի...

Ճիշտ է, յես սիրում եմ իմ թշնամու աղջկան,
բայց հարկ յեղած դեպքում՝ յես կմոռանամ,
կմոռանամ նրան: Սայիդը գրպանից հանեց,
մեզ արդեն ծանոթ Փրանսիացի զինվորից
ստացած «Լ-Յուժանիտե» թերթը և պարզելով
ցույց տվեց Ռահիմին մի նկար...

«ԼԵՆԻՆ»:

— Սա յե՛, սա, ահա մեր մեծ ընկերը: Սա
յե մեզ ճանապարհ ցույց տալիս... Յերեխի դու
նրան չես ել ճանաչում... դառն հառաչով ա-
սաց Սայիդը: Նրա աչքերը բոցավառվեցին իր
դարբնոցի քուրայի պես և սիրտն սկսեց տեն-
դազին բարախել...

Ռահիմը լռեց, վորովհետև վոչ միայն նա,
այլև ամբողջ աշխարհում չկա մեկը, վոր Լե-
նինին չճանաչի, ուստի վոչ մի ձայն չհանեց,
և շտապ բաժանվեց իր տունը դնալու: Ճանա-
պարհին նրա մտքով շատ բաներ եյին անցնում,
նա շատ եր մտածում այն մասին թե, ինչպե՞ս
է պատահել, վոր Սայիդը սիրում է այդ ծե-
րուկի աղջկան, կամ վերջապես աղջիկը ինչ-
պե՞ս է համարձակություն ունեցել Սայիդի
հետ այդ մասին խոսելու, այն ել ամարա-
թում:

Սյդ վայրկյանին, նախ մի փողոց, ապա
յերկրորդը, յերրորդը սկսեցին աղմկել: Մեկը
կարծես Ռահիմի մտքի թելը կտրեց և նա աղա-

մայից սկսեց ձուլվել շուրջն յեղած աղմուկին:
— Հարիր-Ել-Մանսուրը մեռե՛լ է...

Երա այդ անակնկալ մահվան մասին հետադաշում առասպելներ ստեղծվեցին, — թե թուհավորել են, սակայն մի բան պարզ էր, վոր բռնակալը մեռել էր:

Յերբ Սայիդն այդ լուրը լսեց, թվաց թե մի ծանր բան պոկվեց իր սրտի վրայից: Սակայն, հենց ինքը, Սայիդը շատ լավ էր հասկանում, վոր դրանով միայն Փրանսիացի մայորի մի լրտես և ոգնական պահասեց և ուրիշ վոչինչ:

Հարիր-Ել-Մանսուրի թաղմանը մայորը ճառ ասաց, վորպեսզի արաբ ժողովրդի «մեծ առաջնորդի» հիշտակը հավերժանար: Գեներալի կինը, վոր շոգից յերեսն էր հովհարում՝ նույնիսկ յերկու կաթիլ արսասուք թափեց Հարիր-Ել-Մանսուրի համար...

Ամարաթն ամայացավ: Աղավիհային մի յեւք էր մնում, կամ հեռանալ քաղաքից, կամ վերջին հաշվով դնալ Սայիդի տունը... Յերկար մտածելուց հետո՝ նաժիշտին ասաց.

— Յես կզնամ Սայիդի տուն...

Հյուսվարան հավանութուն տվեց:

Հոր մահից հետո, դարբին Սայիդը հաճախ էր լինում Աղավիհայի մոտ: Ճիշտ է, նա հոգու ամբողջ թափով նորից ատում էր սիրած աղջկա հորը, բայց և մխիթարում էր նրան, սիրտ

տալիս, մոռացնել տալով նրա մենակությունը:

— Սայիդ, Սայիդ, ինչքան լա՛վն ես դու...: Յես արդեն վճռել եմ գալ քեզ մոտ, կարմրելով ամելացրեց Աղավիւրան, թելերն ողակելով Սայիդի պարանոցին:

Նույն պահին—բաց դարբասով ամարաթը մտնելով մեայտ ժախը— ծերուկ մայրի քրոջ վորդին: Նրան ուղեկցող զինվորը դարձաւ գորանոց, իսկ մեայտ ժախն հպարտ և տիրական բարձրանում եր սանդուխներով Աղավիւրայի մոտ գնալու համար:

Դռան թակոցը յերկուսին բաժանեց:

— Տես, ո՞վ ե, ձայնեց նաժիշախն Աղավիւրան:

Հյուսիսային մեայտ ժախը կոտրած արարերենով հասկացրեց, վոր ուզում ե տեսնել Աղավիւրային, բայց լսելով, վոր Աղավիւրան իբր ծանր հիւանդ պառկած ե՝ յետ վերադարձաւ: Բայց այդ աներես, ցինիկ զինվորականը, հաջորդ որը, նույն ժամին, հարբած, մըտով Աղավիւրայի սենյակը: Մեայտ ժախը շատ եր ցանկանում տիրանալ նրան, և դրա համար այդ որը, ինչպես արծիվը ծախն՝ հարածում եր խեղճ աղջկան անկյունից—անկյուն: Նա, նույնիսկ, մի քանի ուժեղ ապտակներ զգաց յերեսի վրա: Այդպիսի դեպքեր շատ են պատահում, յերբ կանայք իրենց չնչին ուժով,

նման վայրկյանին, դառնում են ուժեղ, անտիրակալ և հաղթահարում տղամարդուն:

Նախչուն, վողկույզե դուռը բաց անելով ներս մտավ Սայիդը:

— Դո՛ւրս կորի, սարո՛ւկ, դոռաց դադազած ժակը, և կողքից սպայական սուրը քաշելով շարտեց Սայիդի վրա, ուղիղ կրծքին: Սայիդը կռացնով և սուրը շաչելով մեխվեց թավշածածկ պատի մեջ, ճոճվելով և դողդողալով...

Սայիդի դլխում արյան մի ուժեղ հոսանք անցավ, մի ակնթարթում բռնեց սպա ժակին... Սկսվեց յերկուստեք մի ուժեղ կռիվ: Նրանք մոնչում եյին, ընկնում, յեյնում... բղկտում իրար, յերբ վերջապես բրոնզե մի շահակալ արյունոտվեց Աղավիհայի ձեռքով...:

VII

Յերբ Սայիդն ու Աղավիհան հասան քաղաքի ծայրաթաղը՝ Հյուվարան հերարձակ վազում եր նրանց հետևից: Նրանք յերեքով մտան Սայիդի տունը:

Ժամերը տանջալի եյին:

Աղավիհան լաց եր լինում:

Ամբողջ գիշերը նրանք չքնեցին:

Մեսյո ժակի սպանության մասին գեներալ մայորն իմացավ միայն առավոտյան: Զեկուցեցին նրան, վոր գիակը գտնվել է Հարիբ-Նը-

Մանսուրի ամարաթում: Մի զինավառ վաչաքաղաքը տակն ու վրա արեց: Վերջապես մի քանի սրից հետո, ըստ յերևույթին, վորոչ և բավական համոզիչ կասկածների տակ, դարբնոցում հարց ու փորձ արին Սայիդին, Հարիբեյ-Մանսուրի աղջկա մասին: Պահելը գժվար եր, վորովհետև վերջ ի վերջո տունը պիտի խուզարկեյին:

Սայիդին տարան:

Յերբ զինավառ վաչտը մոտեցավ Սայիդի տանը, Աղավիյան տեսնելով նրանց սկսեց դողդողալ, դունատիլ:

— Դուռը բաց արեք:

— Ո՞վ է, ձայնեց ներսից Հյուսիսարան:

— Իշխանության կողմից, դուռաց սրաքիթ սպան:

— Բաց են մեր դռները, դառնությամբ ասաց Սայիդը:

Դուռը բացեցին:

Սրաքիթ սպան հոնքերը ներքև իջեցրեց մի բան հիշելու համար: Նա հիշեց այն յերեկոն, յերբ պատշգամբում, մենյո ժակը ցույց տվեց Աղավիյային: Իսկը նա՛ յե, անցավ սպայի մըտքով:

— Չերբակալե՛լ:

Մի կին և մի տղամարդ կանգ առան մի մեծ շեքի սրահում: Նրանք դունատ եյին, ընկրծված:

Ներսում, սրաքիթ սպան զեկուցեց:

Դիակի զննությունը, իհարկե, ցույց չէր տալիս, թե ով էր սպանել, միայն արյունոտ ձահակալն էր դրված մայրի սեղանի վրա:

— Ձերդ մեծություն, մեսյո Ժակը սպանված է տղամարդու ձեռքով, այդ քնքույշ աղջիկը չէր կարող... Գուցե, ո՞վ գիտե, վայրենի ժողովրդի կանայք ել վայրենի յեն լինում, ասում էր կապիտան Հանրի Ֆրանսուան:

— Շատ հավանական է... կապիտան...

— Հավանական է... սիրելիս, ասաց մի ուրիշը:

Մայրը լուռ էր:

Նրա հրամանով ձերբակալվածները ներս բերվեցին: Սրաբ թարգմանիչը կոկորդը մաքրեց:

Առաջինը յեկավ Ադամիան:

— Մեսյո Ժակին տեսել եյի՞ք յերբևիցե:

— Այո՛... .

— Ինչպե՞ս էր վարվում ձեզ հետ:

— Յես նրան չե՛մ ճանաչում...

— Դուք ճանաչում եյիք նրան, ասաց խիստ տոնով մայրը, դուք սպանել եք տվել ձեր ամուսնու ձեռքով:

— Վո՛չ, բոլորովին վո՛չ, ճշարտվ պատասխանեց Ադամիան: Դուք ինձ չէք ճանաչում... Յես Հարիբ-Ել-Մանսուրի աղջիկն եմ...:

— Հա՛, հա՛, հա՛, — հռհռաց մայրը, Հա-

բիւր-Ել-Մանսուրի ազջիկը: Մտրա'կ, գոռաց
մայորը: Ներս բերեք մյուսին, տղամարդուն:

Սայիդն առաջ յեկավ: Յեվ այն, ինչ վոր
կատարվում էր Սայիդի աչքի առաջ, վորին
նա չէր հանդուրժի անգամ իր կյանքը զոհե-
լով՝ նրա գիտակցությունը վառեց շիկացած
յերկաթի նման...

— Իսկ դո՞ւք, դո՞ւք... մուտաց մայորը:

— Լսեցե՛ք մայոր, և դուք Փրանսիացի-
նե՛ր... Յես մի դարբին եմ, որվա հաց ճարող:
Աղավիհան— Հարիւր-Ել-Մանսուրի ազջիկը՝ իմ
կինն է...

Լռություն:

— Իմ կինն է, շարունակեց Սայիդը, — դուք,
մայոր, մեզ տանջո՛ւմ եք, սպանո՛ւմ, վոչնչաց-
նո՛ւմ... բայց... բայց, լսո՛ւմ եք, կգա մի
որ, վոր դուք այստեղ չեք լինի... Հասկա-
նո՛ւմ եք...:

Նա ձեռքը ջղային կերպով դրոպանը տարավ
և հանեց մի թերթ՝ լայն պարզելով ցույց տը-
վեց Լենինի նկարը:

— Դուք տեսնում ե՞ք սրան... սա՛յ յե ինձ
ասել այդ, և յես հավատո՛ւմ եմ:

— Մեսյո Ժակին՝ յե՛ս եմ սպանել:

— Սայի՛դ, ճչաց Աղավիհան:

Ձինվորները ներս կանչվեցին: Մայիդին և Աղայվիային տարան:

Ավագը չոր, սղնձացած շուրթերով ծծեց արյունը, և անապատի գիշերային խավարի մեջ հռնդում եր ավագե բուքը...:

Մարանյանը լռեց:
Յես լամպը հանգրբի...

1927 թ.



440

APM.

9122 53 400.

2-301

✓

[512]

2 1/2
2008

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0043145

A $\frac{1}{7240}$